

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆՈՒՄ

Ս/թ դեկտեմբերի 29-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը Կապան համայնքում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 17 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր տասներկու, աշխատանքի տեղավորման՝ չորս, շենքի վերելակի վերանորոգման վերաբերյալ խնդրանքով՝ մեկ քաղաքացի:

Դրամական օգնության դիմած տասներկու քաղաքացիների դիմումներին տրվել է դրական լուծում:

Աշխատանքի տեղավորման մասին դիմումները վերցվել են հաշվառման և ուսումնասիրվում են դրանց լուծման հնարավորությունները:

Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումում մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվում է շենքի վերելակի վերանորոգման վերաբերյալ դիմումը: